

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՍԱՆԱՀՆԻ ԵՎ ՀԱՂՊԱՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Սանահինի և Հաղպատի վանքերը կառուցվեցին 10-րդ դարավերջում, Բագրատունիների թագավորության վերելքի շրջանում՝ նրա ներկայացուցիչների կողմից, որպես մշակութային կենտրոններ: Այդ եմ ապացուցում ոչ միայն հիշյալ ուխտերի առաջին առաջնորդներ Հովհաննես գիտնականի և Սիմեոն վարդապետի գիտության ու մշակույթի մարդ լինելու հանգամանքը, այլև նրանց դարավոր գործունեությունը՝ իրենց ուսումնականը, մատենադարաններով, գրչության կենտրոններով:

Միջնադարյան ամեն մի վանք ու դպրոց միաժամանակ նաև գրչության կենտրոն էր, ուր գրչի և նրան օժանդակող մարդկանց համատեղ և ծանր աշխատանքով ձեռագրեր էին ստեղծվում: Ձեռագիրը, որի մեջ մարմին էր առնում մեսրոպյան գիրը, գիտության և դպրության հիմնական զենք լինելուց բացի, միաժամանակ, պետականությունը կորցրած հայ ժողովրդի ազգապահպանության անփոխարինելի և անդափան զենքը մընաց, սկսած իր ստեղծագործության առաջին օրից:

Այդ մատյանները, որոնք իրենց մեջ ամբարում էին ոչ միայն հայ ժողովրդի մտածողությունն ու պատմությունը, գրչության կենտրոններում բազմացվում և փոխանցվում էին հաջորդ սերունդներին: Սակայն այդ կենտրոններում միայն արտագրելով չեն զբաղվում, այլ նաև ստեղծագործում էին, մշակում գրչության արվեստը, մանրանկարչության արվեստը, հիմնում մատենադարաններ: Սրանք մի կողմից պահպանում էին ձեռագիրը, մյուս կողմից՝ այն տրամադրում ուսման և ընդօրինակության:

Գրչության կենտրոններում ձեռագրերն ստեղծվում էին հմուտ և գիտնական վարդա-

պետների ու գրչապետների հսկողությամբ: Նրանք անպայման սրբագրվում էին, ստուգվում, ուղղվում, այլապես անխուսափելի սխալները փոխանցվելով ու կուտակվելով, կաղավաղեին բառը և բանը: Իսկ ձեռագրերի վրա ամբողջ ժողովուրդն էր դաստիարակվում:

Ձեռագրերը գեղեցիկ և հաճելի դարձվելու համար նկարագրվում էին: Նկարները, զարդանկարները և զարդագրերը, սակայն, միայն հաճելի տեսք ստեղծելու համար չէին, նրանք բացահայտում էին ընդօրինակվող ձեռագրի բովանդակությունը, նպաստում այն ավելի հեշտ ու հիմնավոր ըմբռնելուն: Արվեստի գործ էր նաև կազմը, երբ գիրքը ամփոփ ու անվտանգ պահելու պարտականությունից զատ, զարդարվում էր դրոշմագարդերով, թանկարժեք մետաղներով ու քարերով:

Սանահինն ու Հաղպատը հայ գրչության նշանավոր կենտրոններից են, որոնք տվել են գիտնական վարդապետների, մատենագիրների, հմուտ գրիչների, վարպետ ծաղկողների նշանավոր ներկայացուցիչներ, որոնց մտքի, գրչի ու վրձնի արդյունքը դուրս է եկել իրենց վանքերի շրջանակներից և համահայաստանյան նշանակություն ստացել: Հայ ժողովրդի և նրա մշակույթի դառն պատմական ճակատագրից չէին կարող խուսափել մշակույթի նրա խոշորագույն կենտրոններ Սանահինն ու Հաղպատը, որոնք զարգացման փառավոր շրջանների հետ ունեցել են անկման ու անհայտության դարեր:

Չնայած այդ հսկայական կորստին, նրանցից մեզ են հասել մատենագրական երկերի, գրչական, մանրանկարչական, կազմարարական արվեստի հիանալի նմուշներ, որոնք

գաղափար են տալիս Հաղպատի և Սանահինի հոգևոր կենտրոններում ծաղկած մշակույթի մասին: Սանահինի Բեռթոնկ կոչված ավանդամատյանը¹ և վերջերս լույս տեսած Հովհաննես Դրիմեցու Հաղբա վանքի պատմությունը² բավականին նյութ են պարունակում հիշյալ կենտրոնների վերաբերյալ: Այս բոլորին լրացնում են վանքերի արձանագրությունները, որոնք խնամքով հրատարակել է Կ. Ղաֆադարյանը³: Օգտակար աշխատանք է Հ. Ոսկյանի Սանահինի և Հաղպատի վանքերին նվիրված ուսումնասիրությունը⁴:

ՍԱՆԱՀԻՆԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Սանահինի գրչության կենտրոնի պատմությունը սկսվում է վանքի հիմնադրումից վեց տարի հետո, 972 թվականին, Սիմեոն գրչի ընդօրինակած հիշատակարանով: Այն ոչ միայն Սանահինի գրչության կյանքի ծաղկման մասին մեզ հայտնի առաջին վկայությունն է, այլ վանքի հիմնադրման և հարակից հարցերի վերաբերյալ ժամանակակցի և ականատեսի հավաստի վկայությունը, որ գրված է «Սանահինի քեթոնկ» կոչված ավանդամատյանում⁵:

Ձեռագիրը մեզ չի հասել: ԺԷ դարում հիշատակարանը մոծվել է Ավանդամատյանում, հաստատելու Սանահինի հիմնարկության թվականը. «և այլ ևս բերից մեծապատիվ վրկայ գՍիմեոն քաջ քարտուղարն Սանահնու, որ զարբուհոյ Աստուածածնիս հիմնարկութեանն և աւարտմանն ականատես էր եղեալ, որ ի ժամուն յայնմիկ գրել զգիրս Բարսեղի Կեսարացոյ յաղագս ճրգնաւորաց»⁶:

Հիշատակարանից երևում է, որ Սանահինի վանքը կառուցելիս վանահայրն էր հայր Պողիկարպոսը, որին Հ. Ոսկյանը նույնագնում է Կամրջաձորի վանքի կառուցողի հետ⁷: Սա 10-րդ դարի 2-րդ կեսի սկիզբներին Կամրջաձորի վանքը կառուցելուց և կարգավորելուց հետո, 966 թ. ավարտում է Սանահինի վանքի կառուցումը և վախճանվում

970 թ.: Նրան հաջորդում է հայ Գրիգորը: Այդ նույն ժամանակ Սանահինի առաջնորդ է հիշվում Հովհաննեսը: Ինչպես տեսանք, 972 թ. Սիմեոնը, «հրամանա հար իմոյ Յովհաննիսի» ձեռագիր է ընդօրինակում, իսկ Ասողիկը համարում է «առաջնորդ Սանահինի» Յովհաննես գիտնականը⁸: Հովհաննես գիտնական առաջնորդին Սանահինի հիշյալ առաջնորդներից հետ և առաջ հարևանքներում հարկ չկա, մա եղել է Սանահինի թաղման պատճառով Պողիկարպոսի և թե՛ հայր Գրիգորի ժամանակ: Հովհաննես գիտնականի ներկայությունը Սանահնում արդեն դպրոցի գոյություն է եմթադրում: Այդ դպրոցի առաջնորդ թաղման պատճառով⁹ Հովհաննես գիտնականի մոտ սովորում և նրա հրամանով ձեռագիր էին ընդօրինակում նորակազմ ուխտի միաբան գրիչներն ու գրոց աշակերտները: Սանահնում ուսուցման համար ընդօրինակվող ձեռագրերը այդ ժամանակ պատահական չէին կարող լինել, ինչպես նշում է Կ. Ղաֆադարյանը¹⁰, որքան էլ մեզ հասած տեղեկությունները քիչ լինեն: Նոր կազմակերպվող միաբանության ու դպրոցի համար, որտեղ մի քանի հարյուր մարդ կար, դրանք անհրաժեշտ գրքեր էին, որոնք այլևայլ տեղերից գտնում, ընդօրինակվում, ընդօրինակել էին տալիս և ուսուցման հիմք ստեղծում: Այդպիսի նպատակների համար էր նաև մի այլ ընդօրինակություն, որ արել էր մեր կարծիքով նույն Սիմեոն գրիչը, բայց արդեն Հաղպատի համար:

Վենետիկի Միխայիլյան մատենադարանում է պահվում արժեքավոր այդ ձեռագիրը, որն իր մեջ պարունակում է Պողոս առաքյալի թղթերի Եփրեմ Խորիի ու Հովհաննես Ոսկեբերանի մեկնությունները¹¹: Ձեռա-

⁸ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 181:

⁹ Հովհաննես գրիչը 1415 թ. ձեռագիր է ընդօրինակում Մեծփա վանքում, «ի յառաջնորդութեան... տեսուն Յովհաննու և առ ոտս լոյս վարդապետիս Թովմայի...» (Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Ս, էջ 175—176): 1424 թ. նույն վանքում մեկ ուրիշը ընդօրինակում է «ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս... մեծ թաղման պատիս մերոյ Թովմա վարդապետի» (անդ, էջ 320—321): Այդ ժամանակ ուխտի առաջնորդն էր Հովհաննեսը և նաև Թովման որպես թաղման պատճառով:

¹⁰ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 39:

¹¹ Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 309—312, հիմն. նույնի Այրարատ, Վենետիկ, 1890, 497, Գարեգին կաթողիկոս, Յիշատակարան ձեռագրաց, Ս, Անթիպաս, 1951, էջ 163—168:

¹ Մատենադարան, ձեռ. № 3081:

² Հովհաննես Դրիմեցի, Պատմություն հռչակաբոր վանքի Հաղպատայ, ս. Նշանին, Վիեննա, 1965:


³ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957: Հաղպատ, ճարտարապետական կառուցվածքները ու վիմական արձանագրությունները, Երևան, 1963:

⁴ Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960:

⁵ Մատենադարան, ձեռ. № 3081, էջ 19բ, 20բ:

⁶ Անդ, էջ 19բ:

⁷ Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 106:



Սանահին. Գրիգոր Մագիստրոսի ճեմարանի սրահը
(Նկարիչ՝ Գր. Ավագյան)

գրի գրիչը և ստացողը Սիմեոն վարդապետն է։ Բագրատունչաց եպիսկոպոսարանում, տեղ Թադեոսի¹² ժամանակ.

«...լայն ժամու և ի ձեռն նորա գրեցաւ գիրքս ի Նն և ութ (448—999) թուականութեանս հայոց...»¹³։ Թադեոսի այս ընդօրինակությունից էլ արտագրել է Սիմեոն վարդապետը։ Նա Աղբակ և Կոզովիտ գավառներից չէր, ուրիշ տեղից էր եկել։ Այս հանգամանքը նկատի ունենալով Ղ. Ալիշանը գրում է. «Կարծիք եղեն երբեմն ոմանց, եթե գրիչ Մատենիս Սիմեոնին իցէ նոյն ինքն սքանչելագործ սուրբն պաշտպան Մանտուայ քաղաքի Իտալիոյ, որ եկն յերկրէս Հայոց, ի սկիզբն ԺԱ դարու, և հանգեաւ ի սահմանս նորին, ի հոյակապ փնսս Բենեդիկտանց, ի հոյիրոնէ գեղջ»¹⁴։

Մեր կարծիքով Սիմեոնը Սանահինցի գրիչն է, հետագայում Հաղպատի վանքի կառուցողն ու առաջնորդը։

Հաղպատի ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատին արտաքուստ, լուսամտի գլխին գրված է. «ի Նն (991) թակ(անութեան) Սիմեոն հայր եւ Տիրանուն երեց շինեցաք զեկեղեցիս...»¹⁵։ Նա հիշվում է նաև 1005 թվականին, երբ «ի հայրութեան Սիմեոնի...»¹⁶ խաչ են կանգնեցնում Հաղպատում։ Ասողիկ գիտն «առաջնորդ Հաղպատայ՝ Սիմեոն ճգնագեաց»¹⁷։

Աղբակում ու Կոզովիտում ընդօրինակություններն ավարտելուց հետո, գրիչը վերադառնում է իր ուխտը և երկու ձեռագիրը միասին կազմել տալիս Տիրանունին «Եւ զՏիրանունն զկազմիչ և զյարիւնիչ գրոցս անմոռաց ունել»¹⁸։

Ծառ կարևոր է Սիմեոն անվան գրությունը։ Հաղպատի արձանագրության մեջ գրված է. «Սիմեոն», այստեղ՝ «Սիմեոնին» ձևով։ Այդպես է եղել, անշուշտ, նաև Բարսեղի

ճառերի հիշատակարանում, բայց 17-րդ դարում արտագրել են «Սիմեան»¹⁹։

Մեր եկեղեցության օգտին է խոսում նաև այն, որ գրությունից ոչ շատ անց ձեռագիրը ընկնում է Բագրատունչաց Հովհաննես թագավորի ձեռքը, իսկ սրա մահից հետո՝ Անի քաղաքի գրատունը։

Ձեռագիրը գրված է թղթի վրա. գրիչն այն համարում է «աղքատ քարտէս»։ Թուղթը, որ նոր է գրության նյութ դարձել և շատ տարածված չէր, բնական է, որ առաջին հերթին կարող էր Հայաստանի մայրաքաղաքում գտնվել, թագավորաշեն զրչության կենտրոնում։ Մեզ հասած երկրորդ թղթյա ձեռագրերն է այս։ Հավանաբար Անիի շրջակայքում կամ Սանահինում է գրվել նաև 981 թվականից մեզ հայտնի հայերեն առաջին թղթյա ձեռագիրը։ Հետաքրքրական է, որ թղթյա այս երկու հնագույն ձեռագրերը գրված են բոլորգորով, որը Սիմեոնը համարում է «անհեթեթ գիր»։ Առումին օգտագործման համար ստեղծված բոլորագիրն իր դյուրընթեռնելիությամբ մյուս գրատեսակների համեմատությամբ ավելի մատչելի էր շատերին։

Ջարգացող Անին, թագավորաշեն Սանահինն ու Հաղպատը ժամանակի պահանջներին համապատասխան գրանյութ ու գիր էին առաջարկում հայ գրչության դպրոցներին ու կենտրոններին։ Հիշյալ կենտրոններում ուսուցման համար արտագրվող ձեռագրերը այնուհետև թղթի վրա էին գրվում և բոլորագրով։ Կիլիկիայում ավելի մշակվելով բոլորագիրը դառնում է գրչության հիմնական գիր, իսկ թուղթը՝ մասսայական գրանյութ։ Այսպիսով, Սիմեոն Սանահինցուց մեզ հայտնի է Բարսեղի ճառերի ընդօրինակությունը՝ կատարված Սանահինում, Պողոսի թղթերի՝ Եփրեմի մեկնության ընդօրինակությունը՝ կատարված Աղբակում, նույն թղթերի Ոսկեբերանի մեկնությունը՝ արված Կոզովիտում, և դրանց հիշատակարանը՝ գրված Հաղպատում։

Սիմեոնը Սանահինի և Հաղպատի մեզ հայտնի առաջին գրիչն է։

Սանահինի դպրոցի ծաղկումը շարունակվում է վանքի առաջնորդ Դիոսկորոսի ժամանակ ու նրա ջանքերով, որը հռչակված էր որպես «մեծ հոգևոր»²⁰։

Նրա ժամանակ Սանահինի դպրոցում ծաղկում են մատենագրությունը և գրչությունը հմուտ իմաստասեր և աստվածաբան գործակիցների և աշակերտների, հատկապես

¹² Գրված է «Թադեոս» ձևով, բայց «թ» գրելիս գրիչը սխալվել և ուղղել է, որի հետևանքով գլխագիծը մի քիչ երկար է մնացել։ Երկու տող ներքև Թադեոս առաջադի անունը ճիշտ է գրված։ Ղ. Ալիշանը, նրա հետևությամբ, և Գ. Հովսեփյանը գրում են «Դաթեոս» ձևով։ Ձեռագրում այդպես չէ, տե՛ս «Այրարատ», էջ 498, բնագրի նամանակահանությունը։

¹³ Անդ, էջ 311։

¹⁴ Անդ։

¹⁵ Կ. Ղաֆադարյան, Հաղպատ, Երևան, 1963, էջ 115, 141։

¹⁶ Անդ, էջ 181 և 249։

¹⁷ Ստեփանոս Տարոնեցի, Պատմություն, էջ 181։

¹⁸ Հաղպատում, էջ 309։

¹⁹ Անդ, էջ 312։

²⁰ Մատթեոս Ուռհայեցի, Պատմություն, էջ 88։

վարդան, Անանիա Սանահինցիների, Հակոբ Քարապինեցու և այլոց ջանքերով²¹: Կիրակոս Գանձակեցին Անանիա Սանահինեցուն համարում է «այր մտաւոր և հանճարեղ, գիտող տոմարական արհեստի, և գրոց աստուածայնոց մեկնող»²²: Սա «ի խնդրոյ հար Դիոսկորոսի» կատարում է «քացատրութիւն տէրունական քանից կենաքեր անտարանին»²³: Նրա գլխավոր գործն է «Բանք հակաճատութեան» կոչված գրությունը... նրան են վերագրում բազմաթիվ ճաներ, մեկնություններ և այլն²⁴:

Դիոսկորոսի նշանավոր աշակերտներից էր նաև Հակոբ Քարապինեցին, որ կոչվում է նաև Սանահինցի: Մ. Ուոհայեցին նրան կոչում է «այր հօգոր կորովի», «ուսեալ և հասեալ ի վերայ հոնտորական իմաստութեանց և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանց»²⁵: Սա հավանաբար հաջորդում է Դիոսկորոսին, ստանձնելով Սանահինի ուսուցչապետական աթոռը և որպէս այդպիսին 1065 թ. հրավիրվում մասնակցելու Կ. Պոլսի աստվածաբանական վիճաբանության: Հայրենի ավանդները մինչև վերջ պաշտպանել չկարողանալով, միաբանության գիր է կազմում և հանձնում Դուխաս կայսրին «և ի կողմն Հոռոմոց դարձաւ»²⁶: Ն. Աղոնցի կարծիքով այնուհետև չվերադարձավ հայրենիք, գնաց Ուոհա, որ մահացավ 1086 թվականին: Միաբան Այրիվանեցու հիշած Հակոբ Ուոհայեցին նույն ինքը Քարապինեցին է, Սոկրատի եկեղեցական պատմության երկրորդ թարգմանիչը²⁷:

Սանահինի դպրոցի ու միաբանների հետ սերտ կապի մեջ էր Գրիգոր Մագիստրոսը, որի ապացույցը ոչ միայն այնտեղ եղած «Մագիստրոսի ճամբարանն» է, այլև Միշագետքից Սանահինի միաբաններին ուղարկած նրա թուղթը²⁸:

Սանահինի դպրոցը ծաղկում է Գրիգոր Տուտերորդի և Գրիգոր Աբասա որդի նշանավոր մատենագիր-բարոնապետների օրոք: Հիշյալ ժամանակների մատենագիրներ-

րի և գրիչների մեզ հասած երկերն ու ընդօրինակությունները հազվադեպ են: Սակավ են նաև տեղեկությունները նրանց մասին: Սակայն այդ սակավն էլ բավականին հարուստ և արժեքավոր նյութ է պարունակում Սանահինի դպրոցի և գրչության կենտրոնի վերաբերյալ:

ԺԳ դարասկզբից մեզ է հասել Սանահինում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարան: Ձեռագիրը մինչև անցյալ դարը պահվում էր Սանահինի գրադարանում, որից այդ ժամանակ ընդօրինակվել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 9654 ձեռագիրը: Այդ «Ժողովարանք պատմութեանց առասպելացն» գործն է, արտագրված «ձեռամբ Յովաննիսի յոգնամեղ կրօնատրի ի թ չ (այոց) ՌԾԵ (1206)²⁹, ի հռչակեալս Սանահին»³⁰: Գրիչը հիշում է Խաչատուր վարդապետին³¹, որին հանդիպում ենք նաև հետագայում, որպես գրչության ուսուցիչ և հովանավոր:

Մաշտոցի անվան Մատենադարանում Սանահինի՝ որոշակի թվականի ու տեղի հիշատակությամբ հայտնի ձեռագիրը № 1204 թղթա ժողովածուն է, գրված 1231—1233 թվականներին: Ձեռագիրը միասյուն բոլորագիր է: Մի մասի ստացողը Համագասպն է³²: Մի մասի գրիչն ու ստացողը՝ Սանահինի դպրոցի աշակերտ Մատթեոսը, որը 1231 թ. ավարտում է «ընթերցուածի մեկնութիւնս, ի մեծահռչակ ուխտս Սանահին»: Սակայն շուտով մահանում է: Պատանի գրչի ձեռագիրը նրա եղբայր Կարապետը³³ հանձնում է Մատթեոսի «սիրելի ուսումնակցին»՝ Ստեփանոսին: Վերջինս 1233 թ. այս ձեռագիրը միացնում է ուսման համար կատարած իր ընդօրինակություններին և ստեղծում մի ժողովածու, որը պարունակում է շուրջ քսան նյութ:

Ստեփանոսը սույն ժողովածուի մասին գրում է, որ «ի քազում արինակաց ժողովեցի գիրքս յայս»:

Մինչև Սանահին գալով, Ստեփանոսը գրում է, որ հոգևոր ծնողները «քազմածամանակեալ ատորքս սնուցին գիս»: Որեւմն քա-

²¹ Անդ, էջ 148—150:

²² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 112:

²³ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 221—222:

²⁴ Հ. Ոսկան, Գուգարքի վանքերը, էջ 149—150:

²⁵ Մ. Ուոհայեցի, Պատմություն, էջ 273:

²⁶ Անդ, էջ 194:

²⁷ Ն. Աղոնց, Փոքր Սոկրատի հեղինակը, «Միոն», 1936, էջ 306:

²⁸ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 136—138:

²⁹ Գ. Հովսեփյանը «Յիշատակարանքի» 739 էջում այն բերել է այլ աղբյուրից, որի թվականը ՌԾԵ (1208):

³⁰ Մատենադարան, ձեռ. № 9654, էջ 101ա:

³¹ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 739:

³² Մատենադարան, ձեռ. № 1204, էջ 16ա, 29ա, 33ա:

³³ Գ. Հովսեփյանը գրիչներ է համարում Մատթեոսին և Կարապետին, այնինչ Մատթեոսը և Ստեփանոսն են գրիչները. տե՛ս Յիշատակարանք, Ա, էջ 879:

վականին կրթություն ստանալուց հետո միայն կարելի էր Սանահինի դպրոց մտնել: Սանահինում այդ ժամանակ բոլորն թափով ծաղկում էր ապրում գրչության արվեստը: Մաշտոցի անվան Մատենադարանում 11—12-րդ դարից մեկնողական, ուսումնական ձեռագրեր կան, որոնք գրությանը, թղթով մեմակում են Սանահինում և Հաղպատում այդ ժամանակ կատարված ընդօրինակություններին, բայց հիշատակարան չունեն: Դրանցից է նաև № 7431 ձեռագիրը, գրված Սանահինի առաջնորդ Հովհաննեսի համար, որի տեղը և ժամանակը անհայտ են և կարելի է ճշտել օժանդակ վկայություններով: Մի քանի հիշատակագրություններում Գրիգորեն գրիչը հիշում է ստաղդին «գառաջնոյն սուրբ և մեծահոշակ ուխտիս Սանահինս գտորբ հայրս Յովհաննէս ստաղդ սուրբ Համատաւտիս առաքելոյն Պաղոսի...»³⁴: Այս մասամբ հուշում է վայրը, բայց ձեռագիրը կարող էր նաև այլ վայրում գրվել Սանահինի առաջնորդի համար: Գրիչը 361ա էջում հիշում է «զխաչատուր վարդապետ, որ զշիրոնս ետ»³⁵:

Ծիփրոնը այն տախտակն էր, որի վրա գրվում էր ձեռագիրը: Ծիփրոնը գրչի գրասեղանն էր: Ուրեմն ձեռագիրը գրվել է այն ժամանակ և այնտեղ, երբ և որտեղ խաչատուր վարդապետն էր, այսինքն՝ ԺԳ դարի առաջին կեսում, Սանահինի վանքում:

Գրիչը հիշում է նաև «զվարդապետս եւ գուտոցիչ, որ աւծանդ(ակ)եաց ինձ բագում ինչ և յորդորեաց զիս զիրս յայս»³⁶, իսկ դիմացը՝ փակագրում՝ «Աւետիք վարդապետ»: Այսպիսով, Հովհաննէս առաջնորդի հետ Սանահինում աշխատում էին գրչության երկու ուսուցիչներ՝ խաչատուր և Ավետիք վարդապետները: Այս Ավետիքն է, անշուշտ, հաջորդում Հովհաննէս (Ե) առաջնորդին՝ Աւետիս (Բ) անունով, որը հիշվում է 1251 թ.³⁷: Ավետիս վարդապետի ներկայությունը վերստին ապացուցում է, որ ձեռագիրը գրվել է Սանահինում, 1241—1250 թթ., Հովհաննէսի առաջնորդության ժամանակ:

Գրագետ գրիչ է Գրիգորենը, ինչպես ցույց են տալիս ձեռագրում նրա անցած սրբագրությունները:

Երկար է աշխատել Գրիգորենը մոտ 60 պրականոց ձեռագրի վրա, որի թերթերը բավականին մեծ են: Հոգնածություն է զգաց-

վում, և շատ է տրտնջում վիճակից ու քնից, երբեմն էլ գաղափարի սխալներից, որոնց մասին բազմաթիվ նշումներ կան ստորին լուսանցքներում. «տառապեցայ ի գիրս», «կարի խիստ եմ ձանձրացեալ», որովհետև ամուսնը «ճաննս եւ լոյս եւ քունս եման զիս ի գրելոյս և աւիրեաց»³⁸, իսկ ձմռանը «ոհ, ոհ, տոչորիմ ի սառնամանեացս... զի թանաքս սատոյց էր եւ ձեռս քուցումս...»³⁹:

Գրչության արվեստի զարգացման համար գրիչից բացի անհրաժեշտ էր օժանդակ անձնակազմ, թուղթ կոկող, թանաք եփող, սրբագրող, կազմող և այլն: Գրիգորեն գրիչը այդ տեսակետից հետաքրքրական տեղեկություն է հաղորդում թուղթ կոկողի մասին, որը թերևս նախորդ գրիչ Ստեփանոսի եղբայր Սարգիսն է՝ մեզ հայտնի ամենավաճառական կոկողը: Գրիչը հիշում է նրան, «որ զքարտեզս կոկեաց վարձս սոցէ ի Բրիստոսէ Սարգիս անուն քահանայ ՌՍ (2000) տետեր կոկեաց»⁴⁰:

2000 տեր կամ պրակ կոկել (իսկ սույն ձեռագրի յուրաքանչյուր պրակը 12 թերթ է) նշանակում է 2400 թերթ կոկել, այսինքն՝ 100 ձեռագիր ավետարանի թերթ, որ հնարավոր է լավ արհեստանոց և օգնողներ ունենալու պայմաններում:

Ձեռագիր գումավոր լուսանցքազարդերը և զարդագրերը սակավ են, հազվադեպ են գլխազարդ կիսախորանները: Գույները մուգ են և պղտոր, որ ծաղկողը հաստ շերտով դրել է թղթի վրա: Ձեռագրի կազմը գրչության ժամանակակից է և վարպետի գործ:

Այս փաստերը Սանահինում գրչության արվեստի ծաղկման աստիճանի հիանալի վկայություններ են:

1261 թվականին Վարդան Արևելցի նշանավոր վարդապետը «ի խնդրոյ արհիակալն տեսուն Համազասպայ և վարդապետին Գրիգորի, փափակալին սուրբ ուխտին Սանահին», գրում է «Մեկնութիւն հնգեմատենի»⁴¹: Այս նույն Սանահինցին է, հավանաբար, որին հանդիպում ենք 1280 թ.:

Սանահինում այդ ժամանակներում պետք է ընդօրինակված և սրբագրված լինի Տարեգիրքը կամ Ծաշոքը, որը հոչակված էր Սանահինի օրինակ անունով. Մաշտոցի անվան Մատենադարանի № 3758 Ծաշոքը, որ շուրջ 1200 թերթից է բաղկացած, ընդօրինակված

³⁴ Մատենադարան, ձեռ. № 7431, էջ 562բ. տե՛ս նաև 131բ, 549ա, 637բ:

³⁵ Աճ, էջ 361ա:

³⁶ Աճ, էջ 251բ:

³⁷ Հ. Ոսկրան, Գուգարքի վանքերը. 117:

³⁸ Աճ, էջ 590ա:

³⁹ Աճ, էջ 344ա:

⁴⁰ Աճ, էջ 624ա:

⁴¹ Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի, «եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.), «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, էջ 371:

է 1465 թ. «ի Սանահնոյ արքիմակէն»⁴², Գեղարքունիաց կաթողիկոս, իսկ № 4557 ճաշոցը՝ 1500 թ., որը Մելիք-Ավանը՝ «թոռն Գոշ վարդապետին... գրել ետոր... ի Սանահնոյ արքիմակէն»⁴³:

ԺԳ դարի վերջերից շուրջ հարյուր տարի Սանահնի գրչության կենտրոնի մասին տեղեկությունները չունենք: ԺԳ դարավերջում նորից ծաղկում է Սանահնի գրչության դրպոցը՝ տեղի աշակերտների և դրսից եկած Ղազար վարդապետի և իր եղբայր Հովհաննեսի ջանքերով: Այս Հովհաննեսը և իր աշակերտ Հովհաննեսը ընդօրինակում են Ներսէս Շնորհալու չափածո գործերը: Ղազար վարդապետը այդտեղ արդեն հիշվում է որպէս «գարփիափայլ և զլուսատու դիտապետ»⁴⁴: Աշակերտ Հովհաննեսն արդեն քավակահին վարժ գրիչ է, նաև՝ ծաղկող: Ձեռագիրը գրված է մինչև 1399 թվականը⁴⁵: Այդ ժամանակ, 1397 թ., «ի Լոռու գաւառի ի գերադոչակ սուրբ ուխտն Սանահին»⁴⁶ ընդօրինակվում է Գրիգոր Նարեկացու Մատյանը: Այս ձեռագրի գրիչն անհայտ է, հավանաբար վերոհիշյալ ուսուցիչ և աշակերտ Հովհաննեսներից մեկն է, որովհետև այդ ժամանակ ուրիշ գրչի չենք հանդիպում Սանահնում:

Գրչությանը էր զբաղվում նաև դիտապետ Ղազար վարդապետը: 1420 թ. իր եղբոր՝ արդեն վարդապետ Հովհաննեսի հետ Մարտիրոսի համար ընդօրինակում է մի Ավետարան: Հիշատակարանը քայքայված է, և Ղազարի անունը չկա: Ձեռագիրը գրված է «ձեռամբ (յոգ)նամեղ և փրցուն գրչացս և Յովհաննէս վարդապետս» երկուց հարազատաց»⁴⁷: Սանահնում Հովհաննէս վարդապետի հարազատը Ղազարն էր: Նրանք գրել են, իսկ Հովհաննէս «սիրասնունդ աշակերտը»՝ նկարագարող է ձեռագիրը: Այս փաստը ճշգրտվում է նրանց մյուս ընդօրինակությամբ:

Ձեռագիրը պահվում է Մայր Աթոռի ձեռագրատանը: Լ. Ոսկյանը Մարտիրոսին է համարում գրիչը⁴⁸, իսկ Ա. Երեմյանը՝ Հով-

հաննէս Սանահնեցուն, որը սակայն միայն ծաղկողն է⁴⁹:

Մատենադարանի № 4435 Ավետարանը գրված է Սանահնում 1424 թ. «ձեռամբ ամենամեղ և փցուն գրչացս՝ Ղազար վարդապետի՝ առաջնորդի սուրբ ուխտիս և նորին հարազատի Յովհանէս վարդապետի»⁵⁰: Նրանց օգնել է «ի գիր և ի ծաղիկ և ի համաբարբառսն» Հովհաննէս աշակերտը: Ղազար վարդապետը հիշվում է որպէս «քաջ քաթունապետ», իսկ եղբայրը՝ Հովհաննէս վարդապետը, «երաժշտապետ» կամ «փիլիսոփա», նաև գրչության և մանրանկարչության ուսուցիչ: Ահա «առ ոտս» սրանց Սանահնում աճում և բեղմնավոր գործունեություն է ծավալում նշանավոր գրիչ և ծաղկող, հետագայում նաև ուսուցիչ Հովհաննէս Սանահնեցին: Վարդանի և Խոնձի որդի Հովհաննէսը Սանահնեցի է կոչվում, որովհետև «ի մանկութենէ սնեալ և վարժեալ ի դրան սուրբ Աստուածածնիս Սանահնոյ»⁵¹: ԺԳ դարավերջին նա արդեն գրիչ էր, որին տեսանք ուսուցչի հետ ընդօրինակություն անելիս:

Հովհաննէս Սանահնեցին, որ իր ընկերներ Մարկոսի և Գրիգորի հետ գնացել էր Երուսաղէմ «յերկրպագութիւն սուրբ տնաւորնակցս», 1411 թ. այնտեղ ընդօրինակում է մանրութունը «ի յաւ և լընտիր արիմակէ Կարապետոյ»⁵²:

«Հայկազեան տումարի ՊԿԷ (1418)» թվականին «ձեռամբ փցուն գրչի Յովհաննէս Սանահնեցոյ», արդեն Սանահնում ընդօրինակվում է մի Ավետարան⁵³: Այս, ինչպէս նաև նախորդ ձեռագիրը նկարագարող է գրիչը:

Վիեննայի Մխիթարյանների № 419 Մանրութունքի գրիչը նույնպէս Հովհաննէսն է: Այն ընդօրինակված է Սանահնում 1421 թ. «Առ ոտս Ղազար վարդապետի և հարազատ եղբոր իւրոյ Յովսէփ (պետք է լինի Հովհաննէս—Ա. Մ.) փիլիսոփայի»⁵⁴, դարձյալ «յաւ և ընտիր»՝ այս անգամ «Առաքելոյ արիմակ» կոչվածից, հավանաբար Մշու Առաքելոց վանքի անվամբ: Հովհաննէսը 1447 թ.

⁴² Մատենադարան, ձեռ. № 3758, էջ 1170ա:

⁴³ Մատենադարան, ձեռ. № 4557, էջ 572ա:

⁴⁴ Լ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, էջ 122:

⁴⁵ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 328, ծթ. 1:

⁴⁶ Գ. Սրվանձտյան, Թորոս Աղբար, Բ, էջ 385—386:

⁴⁷ Մայր Աթոռ, № 80, «Էջմիածին», 1951, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 88:

⁴⁸ Լ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, էջ 123:

⁴⁹ Ա. Երեմյան, Գրիչ և ծաղկող Յովհաննէս Սանահնեցի (ԺԵ դար), «Բազմավեպ», 1957, էջ 78:

⁵⁰ Մատենադարան, ձեռ. № 4435, էջ 316ա:

⁵¹ Մատենադարան, ձեռ. № 1537, էջ 181բ:

⁵² Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 130—131:

⁵³ Ա. Երեմյան, Գրիչ և ծաղկող Յովհաննէս Սանահնեցի (ԺԵ դար), «Բազմավեպ», 1957, էջ 80:

⁵⁴ Լ. Տաշյան, Յուզակ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի, Վիեննա, 1885, № 419, էջ 878:

իր աշակերտ Տերունակյանի հետ ընդօրինակել է Տաթևացո Քարոզգիրքը⁵⁵:

1423 թվականին «շնորհագարոյի և ճարտար գրչի» Անիի Հովհաննէս արքեպիսկոպոսին, որի «Ռսկէսիորիիկ» մականունը ցույց է տալիս, որ իսկապէս առատաշնորհ անձ է, Հովհաննէս Սմանանեցին գրել է տալիս մի Շարասկնց⁵⁶։ Այն գրել է տալիս իր եղբոր որդիների՝ Ներսէս կուսակրոն քահանայի և Վարդան դպրի համար։ Նկարագարդում է ինքը՝ իր աշակերտ Մելիքսեթեկի հետ։

Հովհաննեսին հետագայում տեսնում ենք վարդապետի աստիճանի և Սանահինի ուխտի փակակալի պաշտոնին հասած: Իսկանդարի բռնությունից խուսափելով Արևելյան Հայաստանի հարավային գավառներից բնակիչները ապաստան էին փնտրում «ի կողմանս Վրաց... ի խմամս բարեպաշտ թագաւորին Ալեքսանդրէ»⁵⁷: Սանահնում էին ապաստանում Արարատյան գավառից Սաղմոսավանքի միաբանները, Սյունիքից՝ տաթևացիներ: Հովհաննես փակակալի մոտ նրանց գտնում էին «բազում գութ հայրանման»: Նրա խնդրանքով Սաղմոսավանքի Կարապետ գրիչը 1436 թ. ընդօրինակում է «Գիրք բնամաշտոցիս, և ձեռնադրութեան գրոց և քահանայաթաղիս»: Հովհաննեսն ասանում է «ի վայրերս անձին եղբորորդոց իմ Ներսէս արեղայի. եւ Վարդան սարկաւազի, որոնի հարազատի եւ շնորհազարդ ծաղկողի և Ստեփանոս կազմողի»⁵⁸: Ձեռագիրը նկարազարդել են ինքը Հովհաննեսը և վերոհիշյալ Վարդանը: 1437 թ. Սանահնում «առ ոտս» Հովհաննես նկարողի ապաստանած Ծմակոն Տաթևացին օրինակում է մի Ծարակնոց, որը նույնպես ծաղկում է Հովհաննեսը⁵⁹: Հովհաննեսը՝ նշանավոր գրիչը և նկարիչը, մեծ ծառայություններ ունի Սանահնի դպրոցում գրչության և մանրանկարչության արվեստը կատարելության հասցնելու և իր ժամանակի Հայաստանի ամենաաչքի ընկնող դպրոցը դարձնելու մեջ:

Սանահնի գրչության դպրոցի նախորդ
շրջանից մանրանկարչական ձեռագրեր մեզ

⁵⁵ Մատենադարան, ձեռ. № 2130, հմմտ. հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 607:

56 Մատենադարան, ձեռ. № 1587:

⁵⁷ Բ. Սարգիսյան, Գ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին ի Վեներտիկ, Գ. 1966, էջ 242:

58 Ա.Գ.:

⁵⁰ Մատենադարան, ձև. 8979, էջ 849ա, 351բ. ձևագիրը հետազայտյում պատկանել է հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի և Մատենադարան մոծվել 40-ական թվականներին:

Հեն հասել: 15-րդ դարի ընդօրինակությունների պահպանակները, որոնք դրված են տեղում և գրության ժամանակ կազմված ձեռագրերում, հին երկաթագիր, երբեմն մանրանկարված թերթեր են: Այնպես որ Սամահ-նի պահոցներում 15-րդ դարում վաղուց նկարազարդ ձեռագրեր կային, որոնցից կարող էր որոշ բան սովորել Հովհաննես Սահակնեցին և շարունակել տեղական ավանդները: Հովհաննես Սահակնեցու ուսուցիչը նույնպես ծաղկող էր, և ինքն է ծաղկել նրանցից մեզ հայտնի առաջին ձեռագիրը:

Հովհաննէս Սահահնգու բոլոր ընդօրինակությունները և Սահահնու 15-րդ դարի առաջին կեսին ընդօրինակված բոլոր ձեռագրերը, որոնք մեզ հայտնի են, նկարագրող է ինքը վաստակավոր նկարիչը: Ա. Երեմյանը իր հոդվածում⁶⁰ նրան հինգ ձեռագիր է վերագրում: Դրանցից երեքը, սակայն, նա չի ընդօրինակել, միայն ծաղկել է: Սակայն, ինչպես տեսանք, ավելի շատ ձեռագրեր է գրել և ծաղկել Հովհաննէս Սահահնցին, որից մեզ է հասել շուրջ տասը ձեռագիր: Նրա ժամանակ Սահահնի գրչության և նկարչության համբավը այնքան էր տարածվել, որ այնտեղ ոչ միայն ձեռագրեր պատվիրելու էին գալիս հարևան վայրերից ու հեռավոր Հավոց թափց, այլև Կիլիկյան շքեղ ձեռագիրը նորոգելու, լրացնելու և զբոլորաբերելու էին բերում Սահահին: Ստեփանոս վարդապետը «Արարատեան գաւառէ, ի յականաւոր և յանմատոյց որդէկէն Անբերդոյ, բնակեալ յանապատի նորին որ կոչի Աղանոց այլ», գնում է Երուսաղեմ, շրջագայելով հասնում է Սիս և որպէս հիշատակ ձեռք է բերում Ավետարան: «Եւ տեսանէ խախտեալ ի կազմէ, պակասեալ ի կարգէ, ստանա զսա ի հալալ ընչից իւրոց և բերէ լաշխարհս մեր, և հասանէ ի գերահռչակութիս, որ կոչի Սահահին. եւ ետ կրկին նորոգել ձեռամբ մեղապարտ Յոհաննէսի, զպակասն գրել և զբերին լնուլ և կազմել..., եւ տեսնարժանս ի կարգաւորաց Յոհաննէս փակակալ և սպասաւոր սուրբ Սստումածմբի Սահահնու, որ ի յայն ժամանակէն մինչեւ ի յայս ժամանակս, որ ծերացեալ եմ ու դուռն գերեզմանին հասեալ... զպակասութիւն Աւետարանիս գրել եմ ու կազմել»⁶¹:

Ձեռագիրը այժմ պահվում է Մատենադարանում: Կիլիկյան շքեղ զարդարված և գեղեցիկ գրված մագաղաթյա Ավետարանը 14—53 և 174—177 թերթերը թուղթ են, որ

⁶⁰ Ա. Երեմյան, Գրիչ և ծաղկող Յովհաննէս Սարգսյանցի (Վաղարշապատ), 1957, էջ 78:

⁶¹ Իսախանյան, ձեռ. № 9999, էջ 176ա, 177,

րոնք գրել, ծաղկել և միացնելով կազմել է ծերունի Հովհաննեսը՝ աշխատելով պահել գրության և ծաղկի ոճը, բայց մնալով Հովհաննես գրիչ և ծաղկող: Այդ 1468 թվականին էր: «Ի դուռն գերեզմանին հասեալ» ծերունուն վերջին անգամ հանդիպում ենք 1462 թ.: Հովհաննես Սանահնեցին իր երկարամյա, շուրջ յոթ տասնամյակ գրչական գործունեությամբ մոտենում է հայ գրչության ամենաերախտավորներից Հովհաննես Մանկասարենցին, որը 72 տարի գրել է: Եթե նկատի առնենք, որ Սանահնեցին նաև ծաղկել է և կազմել, որ նա եղել է նաև եկեղեցական պաշտոնյա, ավելի կապածառնա Սանահնեցու կերպարը և մշակութային գործունեությունը: Այս երկու գրիչների վերջին ընդօրինակությունները գտնվում են Մատենադարանում: Հովհաննես Մանկասարենցի ձեռքը գրելիս դողում էր, ինչպես ինքն է գրում, և ինչպես երևում է ձեռագրից: Այնինչ Հովհաննես Սանահնեցու մոտ այդ չի նկատվում, դեռ ավելին, նա այնպես գեղեցիկ է գրում, որ նրա գիրը Կիլիկյան գրչության մոտ չի նսեմանում: Հովհաննես Սանահնեցին ինքնատիպ էր որպես նկարիչ, որի «ստեղծագործության ատանձնահատկությունները միաժամանակ ընդգծում են Սանահնի մանրանկարչական դպրոցի էությունը»⁶²:

Ինչպես տեսանք, նա է ծաղկել Հովհաննես Անեցի եպիսկոպոսի և Ծմալոն Տաթև վացու ընդօրինակած Ծարակնոցները, ընդ որում վերջինս ընդօրինակել է առաջինից: Մաղագաթյա փոքրադիր ձեռագրեր են երկուսն էլ, համարյա նույնչափ, երկուսն էլ գտնվում են Մատենադարանում: Նույնպես զարդանկարչություն ունեն բոլոր կանոնները: Սակայն ի տարբերություն միջնադարյան նկարիչներից մեծ մասի, որոնք օգտագործում էին կաղապար-ուրվագները, և որոնց օգնությամբ նույն ձևերն ու նկարները կրկնվում էին իրենց զարդագծած տարբեր ձեռագրերում համարյա նույնությամբ, Սանահնեցին Ծարակնոցներից մեկում ծաղկած չափն ու ձևը չի կրկնել: Յուրաքանչյուր զարդ ու զարդագիր-լուսանցազարդ ու նույնիսկ ամբողջ էջն զբաղեցնող նկար կատարված է ստեղծագործաբար: Պահպանելով բովանդակության նույնությունը՝ տարբեր ձևեր է օգտագործել նկարիչը:

Հովհաննես Սանահնեցին նաև գրչության և մանրանկարչության ուսուցիչ էր. նրա աշակերտներից են՝ եղբորորդիները, Ներսես

գրիչն ու երաժիշտը, Վարդան ծաղկողը, Բեննուշ դպիրը, ապա, Տերունական և Արիստակես Տիրատուր գրիչները, Աստվածատուր և Կարապետ կազմողները և այլք:

Իր ուսուցչի՝ Հովհաննեսի հետ էր աշխատում Սանահնի մյուս գրիչ Տերունական աբեղան: Ետիկ և Թամարխայունի որդուն առաջին անգամ հանդիպում ենք 1423 թ. իր ուսուցչին մագաղաթ շնորհելիս⁶³: 1441 թվականից Տերունական գրիչը «ծերացեալ և նեխեալ անձամբ, յետինս աշակերտաց սորա (Յովհաննեսի—Ա. Մ.)» ընդօրինակում է մի Ավետարան «ի յերկնահանգէտ և ի գերահոշակ սուրբ ուխտս Սանահնի...» կամակցությամբ եղբարցս Ներսէս փիլիսոփայի և այլ միաբանիցս» և ետու ծաղկել Յոհաննես վարդապետի՝ տիրական պատկերաբ՝ բոլոր տնօրինակաւք, փառսուր անտարանջօք, և գեղեցկատեսիլ խորանօք, և դիրաբայեաց ծաղկաւք և զոյներանկ ցեղօք, և ծերացեալ ալեօք աշխատեալ և նեղացեալ լոյով»⁶⁴: 1447 թ. Հովհաննես կաթայեցին ատանում է Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը՝ գրված «ձեռամբ Տերունական(ի) և Յոհաննես կրօնատրի Սանահնեցոյ»⁶⁵: Հասկանալի է, որ Սանահնիում ձեռագիրը կրկնագիր մագաղաթ է, հաստ և կոշտ: Հագիվ նշմարվում է, որ գրված է եղել մանր երկաթագրով: Մատենադարանի № 2657 գանձարանի գրիչը նույնպես Տերունականն է: Հիշատակարան չկա, բայց մի էջում խնդրում է «գմեղօք մենեալ ոգիս գՏերունական աղաչեմ յիշել ի Քրիստոս»⁶⁶: Վարժ գրչի գանձարանը նկարագրող է անշուշտ Հովհաննես Սանահնեցին, նրանք են ոճը և գույները. ամեն կանոնի կամ գանձի լուսանցքում նկարված է համապատասխան սուրբը: Աստվածածնի գանձերից մեկից հետո գրում է. «Այս չէր լայս տեղ գրելու, ապա վասն սիրող Աստուածածնի և երկիտին գրեցի»⁶⁷: Գրիչը Սանահնի ս. Աստվածածնի սիրուն է խախտել գանձարանի կարգը: Ձեռագիրը միշտ պահվել է Սանահնի գրատանը և այնտեղից երեսնական թվականներին մոծվել Մատենադարան:

Տերունականը 1441 թ. արդեն «ծերացեալ և նեխեալ» էր, ձեռագիրը պետք է գրված լինի այդ ժամանակներում, այսինքն՝ ԺԵ

⁶³ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 303:

⁶⁴ Նույն տեղում, ԺԵ, Գ, էջ 396—397:

⁶⁵ Մատենադարան, ձեռ. № 2130, էջ 425բ:

⁶⁶ Մատենադարան, ձեռ. № 2659, էջ 68ա:

⁶⁷ Անդ, էջ 83ա:

⁶² Ա. Երեմյան, Գրիչ և ծաղկող Յովհաննես Սանահնեցին... էջ 78:

դարի առաջին կեսում, այնինչ այն համարում են ժԶ դարի ընդօրինակություն⁶⁸:

Հովհաննես Սանահնեցու աշակերտների մեջ աչքի են ընկնում իր եղբոր որդիները և թոռները, որոնք շարունակում են Սանահնի գրչության կենտրոնը հարստացնել ընդօրինակություններով: Ներսեսից և Վարդան ծաղկողից բացի հայտնի են Զանգիաշայի և Հովհաննեսի եղբայրներից Արիստակեսը և Խաչատուրը՝ գրիչ և ծաղկող:

Հովհաննես Սանահնեցին եղբոր թոռան, Զանգիաշի և Նուկրարի որդի Արիստակեսի ուսուցիչն է: Սա 1469 թվականին Սանահնում Հաղպատի առաջնորդի համար ընդօրինակում է մի Ծարակնոց⁶⁹:

1463 թ. Սանահնում ընդօրինակվել է մի Ծառոց⁷⁰, որի գրիչը հայտնի չէ: Արդյոք Արիստակեսը չէ՞ գրիչը: Նրանցից մեզ հայտնի մյուս ձեռագիրը 1475 թվականից է: Բարսեղ եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ Արիստակեսը գրում և ծաղկում է մի Ավետարան⁷¹: Ձեռագրում ուրվագծված են բոլոր ավետարանիչները, բայց չեն գումարվում: Նստած ավետարանիչների շքանակի վերին մասում կիսաշրջանից դուրս են նայում ավետարանիչների խորհրդապատկերների գլուխները: Խաչատուր աշակերտը վկայում է, որ իր ուսուցիչ Արիստակեսը ծաղկել է իր՝ 1485 թ. ընդօրինակած Ավետարանը. այդ առթիվ հիշում է՝ «ուսուցիչն իմ գՏեր Արիստակեսն, որ բազում աշխատութեան ծաղկազարդեաց գտրբ Ավետարանս...»⁷²: 1490 և 1496 թվականներից

Արիստակեսից հայտնի են մեկական Ավետարան⁷³, իսկ 1497 թ.՝ մի Ծարակնոց: Ծարակնոցը պատվիրում է գրչի հորեղբորորդի Հովհաննես վարդապետը:

Իսկապես հաջորդ, ժԶ դարից մեզ են հասել Մկրտիչ կրոնավորից երեք ձեռագրեր. 1504 թ. օրինակած Ավետարանը, 1507 թ.՝ Ծարակնոցը, և 1516-ին՝ Ժամագիրքը՝ Թումա րաբունու օրինակից⁷⁴: 1534 թ. Տերունականը ընդօրինակում է մագաղաթյա մի Ավետարան:

ԺԷ դարից մեզ հայտնի են Սրապիոն գրչի երկու Ավետարանները՝ 1646 և 1647 թվականներից⁷⁵: Այդ դարում է կազմվել Սանահնի Քոթուկը⁷⁶ և լրացվել է տարբեր գրիչների կողմից՝ հասցվելով մինչև 19-րդ դար:

Հայ գրչության արվեստը իր զարգացման բարձրագույն աստիճանին է հասնում 14—15-րդ դարերում: Այդ երևույթը նկատվում է նաև Սանահնում: Հովհաննես Սանահնեցու և իր աշակերտների ջանքերով այն համահաստանյան նշանակություն է ստանում: 16-րդ և հաջորդ դարերում գրչության արվեստն այլևս այդ մակարդակը չի ունենում, բայց շարունակում է իր գոյությունը:

Սանահնի գրչության կենտրոնը, սկսած 10-րդ դարից, իր տքնաջան գրիչների ու վարդապետների ջանքերով հայրենի մշակույթի ջսիհը պայծառ պահեց՝ հարստացնելով հայ ձեռագրական մշակույթը մատենագիտական կարևոր երկերով, գրչության և մանրանկարչության նշանավոր գործերով ու ընտիր օրինակներով, որոնք բազմացվում էին ոչ միայն տեղում, այլև Հայաստանի գրչության տարբեր կենտրոններում:

⁶⁸ Յուդակ ձեռագրաց Մաշտոցյան Մատենադարանի, հտ. Ա, Երևան, 1965, էջ 847:

⁶⁹ Բ. Կյուլեսերյան, Յուդակ Ղալաթիոյ, էջ 1042: Հմմտ. Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 296, Գ, 2:

⁷⁰ Մ. Տեր-Մովսիսյան, Յուդակ, 54—92:

⁷¹ Մատենադարան, ձեռ. № 6883:

⁷² Մատենադարան, ձեռ. № 10147, էջ 236ա:

⁷³ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 147: Մատենադարան, ձեռ. № 3333:

⁷⁴ Հայերեն ձեռագրերի համահավաք բարոտարան:

⁷⁵ Մատենադարան, ձեռ. № 6663 և Գ. Սրվանձատյանց, Թորոս աղբար:

⁷⁶ Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 219:

